

Պ. Գ. Մսերեանի աշխատասիրութեամբ *Մէտէօրա* անուամբ Իզմիրի մէջ ի լոյս ընծայուեցաւ այս հանդէսն:

Նոյն բարեմաղթութիւնը կ'ընենք այս հանդէսին՝ ինչ բարեմաղթութիւն որ կ'ըլլան բարեկամներու նոր տարւոյ առթիւ:

Մէտէօ՛րա, երջանիկ օրեր, յաջողութիւն, առատ բաժանորդներ եւ յարատեւութիւն կը մաղթեմ քեզի:

Պ. Մսերեան, քեզի ալ լայն սիրտ եւ ընդարձակ քսակ կը մաղթեմ, որ կարենաս վնասու կուրծք տալ եւ շարունակել ինչ որ սկսած ես:

13 Մեպտեմբեր

Բ. Դուռն որոշած է Տուլչինիօն յանձնել՝ եթէ Յունաստանի եւ Հայաստանի խնդիրներուն համար նաւային ցոյց չլինի:

Ես կ'աղօթեմ, որ Տուլչինիօն չյանձնուի, որպէս զի Հայաստանի համար ալ նաւային ցոյց մը լինի:

14 Մեպտեմբեր

Բարձր Հայոց անգղիական հիւպատոս պ. Թրօթըր խիստ բարի վկայութիւններ կու տայ Հայաստանի հայերուն համար:

Պ. Թրօթըրի վկայութեանը նայելով՝ Հայաստանի գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ հայերը վարժարաններուն մէծ հոգ կը տանին, սակայն գիւղերու մէջ պէտք եղածին չափ վարժարաններ չկան դեռ: Անգղիական հիւպատոսն համոզուած է, որ Հայաստանի մէջ ապագայն հայերուն է, որք միշտ օգնութիւններ կ'ընդունին կենդրոնէն – մայրաքաղաքէս – մինչդեռ քիւրդերն ոչինչ ունին գովեստից արժանի: Ժամ է որ Միացեալ ընկերութիւններն եւ Արհեստասիրաց ընկերութիւնն բազմապատկեն իրենց ջանքերն Հայաստանի մէջ լոյս տարածելու:

15 Մեպտեմբեր

Ս. Պատրիարքը պատասխանեց դատական նախարարութեան կողմէ առ ինքն ղրկուած ծանուցագրոյն:

Ներսէս Պատրիարքն կ'ըսէ, թէ ինքը չէ ստեղծած *Հայաստան* բառն, որ կգտնուի նոյն - իսկ թուրք կառավարութեան շինել տուած աշխարհացոյցներուն մէջ:

Ամենապատիւ Պատրիարքն կ'յայտնէ յետոյ, թէ ինքը բնաւ հաճոյք չզգար հարստահարութիւններու համար *թաքրիք* գրելով. թէ կառավա-